ԿԱՆԹԵՂ մանկական գուսանական երգչախմբի

արտադասարանական խմբակի 2023-2024 ուստարվա ծրագիր

/5-9-րդ դասարանների/

Խմբակի ղեկավար՝ Աննա Թադևոսյան

Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3
Ծրագրի նպատակը և խնդիրները.....4
Ծրագրի բովանդակությանը հատկացվող ընդհանուր ժամաքանակը.....5-6
Ծրագրի նպատակը.....7
Խնդիրներ և վերջնարդյունք.....8

Ներածություն

Արվեստը մարդու ստեղծագործական գործունեության ձևերից մեկն է: Այն հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ կյանքը, ճանաչել աշխարհը, զգալ և տեսնել գեղեցիկը:

Արվեստի տեսակներից են գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատրոնը, կինոն և այլն: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր <<լեզուն>> և արտահայտչամիջոցները: Օրինակ, երաժշտության մեջ՝ ռիթմը, հնչյունների բարձրությունը, ելևէջները:

Արվեստի տեսակները միմյանց հետ փոխհարաբերվելով և իրար լրացնելով՝ դառնում են ավելի գրավիչ: Դրա վառ օրինակներից են թատրոնը, օպերան, բալետը և կինոն:

Երաժշտությունը լսողական, ժամանակային արվեստ է, որը մարդկային զգացմունքները, բնության երևույթներն արտահայտում ու նկարագրում է հնչյունների շարժման և ռիթմի միջոցով, ինչպես նաև հուզական մեծ ներգործություն է ունենում մեր հոգևոր աշխարհի ու մտքի վրա, սերմանում գեղեցիկի զգացողություն:

<<Ոչ մի այլ միջոց չի կարող ավելի լավ և ավելի արդյունավետ խրախուսել կրթությունը և լուսավորությունը, քան գեղեցիկ արվեստները՝ պոեզիան, երաժշտությունը և գրականությունը>>:

Խ. Աբովյան

<<Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորությամբ կենդանության շունչ է տալիս բանաստեղծությանը, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհքում, որ կոչվում է երաժշտություն>>:

Հովհաննես Թումանյան

Սույն խմբակի ծրագիրը կազմվել է նպաստելու սովորողների.

- Լսողական, գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը
- Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը
- Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը,
- Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը
- Հոգևոր, ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Դասի ընթացքում կիրառվում են.

- Զրույցներ
- Ունկնդրում և վերլուծություն
- Երգի ուսուցում՝ կիրառելով մի շարք հնարքներ՝ շարքերով-միմյանց շարունակելով, մենակատարներով, ակապելլա և կապելլա երգեցողություն, զույգերով, տրիոյով, կվարտետով և այն
- Ռնգային երգեցողություն (բերանը փակ)
- Ձայնավարժություններ մաժոր և մինոր լադերում՝ իտոմատիկ, տերցիայով, կվարտայով, օկտավայով
- Շղթայաձև շնչառություն:

Ծրագրի բովանդակությանը հատկացվող ընդհանուր ժամաքանակը

/72-76 ժամ/

1-ին կիսամյակ

Ամսաթիվ	Թեմաներ	Նյութեր
Սեպտեմբեր	Ի՞նչ է երգչախումբը: Խմբավարի դերը	Հայկ. ժող. երգերի ունկնդրում և ուսուցում
Հոկտեմբեր	Գուսանական երգարվեստ	Հայ գուսաններ. Հավասի Շահեն: Երգերի ունկնդրում և ուսուցում
Նոյեմբեր	Աշուղական երգարվեստ	Սայաթ-Նովա, Ջիվանի. երգերի ունկնդրում և ուսուցում
Դեկտեմբեր	Աշուղական երգարվեստ	Սայաթ-Նովա, Ջիվանի. երգերի ունկնդրում և ուսուցում

2-րդ կիսամյակ

Ամսաթիվ	Թեմաներ	Նյութեր
Հունվար	Հայրենական երգեր	Հայոց Բանակի տոն. Ռազմական երգերի ունկնդրում և ուսուցում
Փետրվար	Ժողովրդական տոներ	Տեառնընդառաջի և Բարեկենդանի երգերի ուսուցում
Մարտ	Ժողովրդական երգեր	Մանկական ժողովրդական երգերի ունկնդրում և ուսուցում
Ապրիլ	Հիշատակի օր. Ցեղասպանություն	Հայրենական երգերի ուսուցում
Մայիս	Հաղթական երգեր	Մայիսյան տոներին նվիրված երգերի ուսուցում
Մայիս	*Հաշվետու համերգ*	

Ընտրովի թեմաներ

Օգտագործվող գրականություն. Սայաթ-Նովա, Ջիվանի
Հայկական ժողովրդական երգերի, պարերգերի մշակումներ, մանկական ժողովրդական երգեր, հոգևոր երգեր:

Խմբակին տրամադրվել է 2 ժամ

Օրեր	Ժամ	Դասաժամ
Երկուշաբթի	14:05	7-րդ
Հինգշաբթի	14:05	7-րդ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԱԳԻՐ

1. Հայկական ժողովրդական երգեր
2. Գուսանական երգեր
3. Աշուղական երգեր
4. Հեղինակային երգեր
5. Դաս-միջոցառումներ
6. Ցերեկույթներ
7. Հիշատակի օրեր
8. Հոբելյանական օրեր
9. Բանակի տոն
10. Ժողովրդական տոներ
11. Հաշվետու համերգ

Ծրագրի նպատակը

- Սովորողներին ծանոթացնել առարկայի պահանջներին՝ խմբակային երգեցողությանը, միաձայն, եռաձայն և բազմաձայն երգեցողությանը, ճշգրիտ ինտոնավորումը երգչախմբում: Խմբավարի (ուսուցչի) դերը երգչախմբում:
- Դպրոցական տարիքից աշակերտներին հաղորդակից դարձնել գեղեցիկին և արժեքավորին:
- Լուրջ աշխատանք տանել աշակերտների լադային լսողության զարգացման ուղղությամբ՝ ժողովրդական, ազգային, հայրենասիրական, ռազմական, գուսանական, աշուղական եգերի ուսուցման միջոցով:
- Բոլոր ձայնաստիճաններից կատարել ձայնավարժություններ: Պարբերաբար երգել դո մաժոր գամման (վերընթաց և վարընթաց կարգում):
- Խմբերգային արվեստի միջոցով զարգացնել զգացմունքային աշխարհը, հետաքրքրությունների շրջանակը:
- Խմբակային երգեցողության միջոցով զարգացնել կարգապահություն, ուշադրություն, պատասխանատվության զարգացում:
- Սեր և հետաքրքրություն դաստիարակել խմբակային երգարվեստում ձայների ներդաշնակության հանդեպ:
- Երաժշտության միջոցով բարերար ազդեցություն գործել սովորողների նյարդային համակարգի ձևավորման վրա՝ որպես հոգեթերապիա:
- Սովորողներին հաղորդակից դարձնել երգչախմբային արվեստին, արվեստների բազմազանությանը, տաղանդավոր ստեղծագործողների գործերին և դրանց միջոցով համամարդկային և բարոյական արժեքներին:
- Պարբերաբար կազմակերպել դաս-համերգներ՝ տոնակատարությունների, հոբելյանների, հիշատակումների, տարբեր իրադարձությունների առթիվ: Դաս-համերգները կարող են լինել նաև համակցված՝ ասմունքի և պարային խմբերի հետ:
- Պատրաստել տարեվերջյան հաշվետու համերգ՝ ներգրավելով ամբողջ երգչախմբին:

Խնդիրներ

- Ծրագիրը կազմել՝ հաշվի առնելով երեխաների ձայնային հնարավորությունները, երգչախմբի կազմը և պատրաստվածությունը:
- Լսողության, հիշողության, ռիթմի զգացողության զարգացման նպատակով դպրոցականների տարիքին, ձայնածավալին համապատասխան վարժությունների ընտրություն:

Վերջնարդյունք

- Ծրագրի յուրացում, խմբավարի ձեռքերի շարժումների յիրավին ըմբռնում, ընկալում: Երեխաների անկաշկանդ մասնակցությունը, պահվածքը բեմում կազմակերպվող համերգներին:
- Երգային ձայների միջոցով հաղորդել տրամադրություն:
- Սեր և հետաքրքրություն ձևավորել տարբեր տեսակի երգչախմբային կատարումների հանդեպ:
- Կարողանալ վերուծել և հայտնել սեփական կարծիք: